

Հայ եւ Արար գործներուն կը ձայնակցին նաեւ Եւրոպացի ուղե-
գիրներ՝ Հայն ու Հայաստանը գորգարտադրութեան առանցքը ցոյց
տալով: Մեծահամբաւ Վենետիկեցի ճանապարհորդ Մարքոյ Բոլոյ ԺԳ
դարուն վերջը կը վկայէ. «Թուրքոմանիայի բնակչութիւնը կարելի է
երեք դասակարգելու բաժնել: Թիւրքմէններ...: Միւս դասակարգերն
են Յոյները եւ Հայերը, որոնք կը բնակին քաղաքներու եւ ամրոցնե-
րու մէջ, եւ իրենց ապրուստը կը շահին վաճառականութեամբ եւ
ճարտարարուեստով: Աշխարհիս լաւագոյն եւ գեղեցկագոյն գորգերը
հոս հիւսուած են, նաեւ որդան եւ ուրիշ ճոխ գոյներով մետաքսեղէն-
ներ»⁽²⁹⁾: Իր յիշած քաղաքներու շարքին են Գոնիա, Կեսարիա եւ Սե-
բաստիա, իբր գլխաւոր կեդրոններ կամ քաղաքներ «Թուրքոմանիա»յի:

ԺԳ դարէն վերջ գորգաշինութիւնը Հայաստանի մէջ սկսաւ քայ-
քայուիլ արտաքին պատճառներով: Օտար արիւնխախնձ արչաւանքներ,
Հայ մեծագանգուած արտադրողներ դէպի Ղրիմ, Լեհաստան, Եւրո-
պայի գանազան կողմերը, որուն միացած Թիմուրլէնկի, Սէլիմ Ա.ի
եւ Շահ Ապպաս Ա.ի մեծաթիւ եւ բնորական բռնադատողները, պարպե-
ցին, կողոպտեցին Հայաստանը իր արտադրող բնակչութենէն: Օտար
բռնատէրեր Հայաստանէն տարուած նախընտրելի գանձը սեպեցին
Հայ արհեստաւորները: Տաննակ հազարաւոր բնորանի Հայ գործա-
ւորներ բռնի տարուեցան Պոլսարայ, Սմրղանտ, Սպահան, Խորասան
եւ Կ. Պոլիս, այդ վայրերը շինելու, զարդարելու, ծաղկեցնելու: Մինչ
սաղին Հայ ձեռարուեստները բնիկ երկրին, Հայաստանի մէջ, մեծա-
պէս կը տուժէին:

1404ին Սպանիացի ուղեգիր եւ Թիմուրի գեսպան դացող Գլադի-
տոյ Երզնկայէն անցնելով կը վկայէ թէ երկրին բնակիչները մեծ
մասամբ Հայեր էին, ու կ'աւելցնէ. «մենք ուր որ կանդ առինք ցորեկը
անցընելու ատեննիս կամ դիշերը մ'նալու ժամանակ, անոնք (գլուզա-
ցիները) իրենց տուներէն դուրս կը բերէին գորգեր եւ պատուով դմեզ
անոնց վրայ կը նստեցնէին»⁽³⁰⁾: Իսկ անոնց ճաշի սեղանը կը բազ-
կանար գետինը սփռուած գորգի մը վրայ դրուած կլոր կաշիէ մը:
Հայ գլուզացին ինչպէս այն ատեն՝ հիմակ ալ ինք կ'արտադրէր իրեն
հարկ եղած կահն ու կարասին, նա մանաւանդ գորգերն ու այլ հիւս-
ուածեղէնները:

Ճ. Պարսպարոյ Վենետիկեցին իր ԺԵ դարու ուղեգրութեան մէջ կը

1919ի Լոնտոնի Անգլիերէն լեզուով եղած թարգմանութեան եւ հրատարակու-
թեան մէջ չգտայ այս վկայութիւնը:

(29) Իմ թարգմ. «Ֆաղմովէպ», 1930, էջ 215-316: Նոյնպէս իմ թարգմ. «Հայ-
րենիք» ամսագիր, Պոսթոն, 1933, թիւ 2, էջ 144: Մարքոյ Բոլոյի այս վկայու-
թիւնը թեք ու դէմ կարծիքներու դուռ բացաւ: 1908ին Տր. Յըր. Մարթին եղա-
ծին պէս ընդունեց, սակայն 1925ին Մր. Ա. Ու. Փօփ ջանաց երկար յօդուածով
մը հակառակը պնդել եւ նոյնիսկ կասկածելի ներկայացնել Մարքոյ Բոլոյի այս
որոշ վկայութիւնը, զայն խեղաթիւրել յանդգնելով: Ասոր պատասխանեց Պր. Ա.
Մազրզեան 1928ին, Փարիզի «Բըվիւ Սիբի»ի մէջ (յետոյ արտասպուած առան-
ձինն): Իսկ ես իմ կարգիս 1931ին «Ֆաղմովէպ»ի մէջ յօդուածաշարքով մը ցոյց
տուի Փօփի բնադատութեան բմահաճ, անհեթեթ եւ արժէքէ գուրկ ըլլալը:

(30) Clavijo, 1928, p. 121.